«Լեզգիական խաղաքարտն» Ադրբեջանում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 15.10.2024 թ.[1]

2024 թ. սեպտեմբերի կեսերին հայտնի դարձավ, որ ԱդրՀ Կուսարի շրջանի անտառներում մարտեր են սկսվել Ադրբեջանի ՆԳՆ, ՊԱԾ հատուկ նշանակության ստորաբաժանումների և «իսլամիստ-գրոհայինների» միջև: Կուսարի շրջանի լեզգիաբնակ Գյիլ բնակավայր են մտցվել զրահամեքենաներ և գործադրվել ԱԹՍ-ներ: Մերձավորարևելյան մի շարք Տելեգրամ-ալիքների տվյալներով՝ ադրբեջանական հատուկ նշանակության ստորաբաժանումներն առ 16.09.2024 թ. կարողացել են ոչնչացնել շուրջ 10 գրոհայինի, իսկ իրենք 8-ից ոչ պակաս կորուստ են ունեցել:

Մարտական բախումների ծավալների մասին վկայում են մի շարք անուղղակի տվյալներ: Օրինակ, 18.09.2024 թ. ադրբեջանական սոցցանցերում հայտնվել են հանրապետության մայրուղիներով մարտական տեխնիկայի և տրանսպորտի շարասյուների տեղաշարժը ցուցադրող կադրեր: Համացանցի հայկական հատվածում լուրեր են տարածվել առ այն, որ, իբր, Ադրբեջանը զորքեր է տեղափոխում դեպի ՀՀ հարավում գտնվող Կապան քաղաքի ուղղությամբ: Սակայն դատելով այն բանից, որ շարասյուները բաղկացած էին անձնակազմի տեղափոխման համար նախատեսված անիվային զրահատեխնիկայից, կարելի է ենթադրել, որ դրանք մեկնում էին Կուսար: Բացի այդ, տեղաշարժերն արձանագրվել են ցերեկը, ինչը բնորոշ չէ լայնածավալ հարձակողական ռազմական գործողության նախապատրաստությանը և վկայում է ուժերի շտապ տեղափոխման մասին: Ըստ ամենայնի, Կուսարի միջադեպն այնքան ծավալուն ու անսպասելի էր Բաքվի համար, որ նրան ստիպեց տարբեր շրջաններից հապշտապ կերպով ՊՆ ստորաբաժանումներ տեղափոխել հանրապետության հյուսիս:

Բացի այդ, հատուկ ուշագրավ է նաև այն փաստը, որ ադրբեջանական ինչպես իշխանամետ, նույնպես և ընդդիմադիր ԶԼՄ-ները ոչ մի կերպ չեն արձագանքել Կուսարում տեղի ունեցող իրադարձություններին: Ակնհայտ է, որ նման ոչ բնորոշ լռությունը պայմանավորված էր մամուլի վրա վարչախմբի ճնշմամբ: Դժվար է պատկերացնել, որ ԱդրՀ-ում գրոհայինների սահմանափակ խմբի վերացմանն ուղղված «հաղթական գործողությունը» չարժանանար տեղական ԶԼՄ-ների ուշադրությանը: Հետևապես, տվյալ պարագայում խոսքը վերաբերում է ոչ թե գրոհայինների սահմանափակ խմբին, այլ տակավին օրակարգում մնացող ծավալուն հիմնախնդրին:

Ռուսաստանի որոշ աղբյուրների տեղեկություններով՝ Կուսարում իրավիճակը շարունակում է լարված մնալ: Շրջանը մեկուսացված է արտաքին աշխարհից, ամենուրեք անցակետեր են տեղադրվել, հատուկ նշանակության ստորաբաժանումները միջոցառումներ են անցկացնում՝ ուղղված 3000 (!) գրոհայինների որոնմանը, որոնք

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 09.10.2024 թ.:

թաքնվում են ինչպես լեռնա-անտառային տեղանքում, այնպես էլ՝ գյուղերում[2]: Դա կարող է նշանակել, որ եթե բերված տվյալները համապատասխանում են իրականությանը, ապա Կուսարի շրջանի ավելի քան 90 բնակավայրում այս պահի դրությամբ կենտրոնացված են առնվազն 15.000 աշխատակիցներ հանրապետության տարբեր ուժային գերատեսչություններից ու կառույցներից: Ենթադրյալ թիվն ինքնին խոսում է իր մասին:

Հաշվի առնելով Ադրբեջանի համար հիմնախնդրի բարդությունը և այն ժամանակաշրջանը, երբ այն նման մասշտաբով իրեն զգացնել տվեց, կարելի է ենթադրել, որ այդ իրադարձությունները նախապես ծրագրված էին: Համաձայն դեպքի վայրից ԶԼՄ-ներ թափանցած կցկտուր տեղեկությունների (Բաքուն արգելափակել է համացանցը և կապի այլ միջոցները Կուսարում)՝ շրջանում բախումների բռնկումն ինքնաբուխ է եղել: Պատճառը եղել է Ադրբեջանի ԱԻՆ-ի աշխատակցի սպանությունը Գյիլ գյուղի դիմացի լեռնա-անտառային զանգվածում: Իբր անտառում զբոսանքի ժամանակ նա պատահաբար հանդիպել է գրոհայինների որջին և, նկատվելով նրանց կողմից, տեղնուտեղը գնդակահարվել: Դրանից հետո ՆԳՆ տեղական կառույցները հանցագործության մեջ կասկածել են Կուսարի անտառներում թաքնված իսլամիստ գրոհայիններին և շտապ օգնություն խնդրել անվտանգության հանրապետական կառույցներից:

Տվյալ վարկածը կարող էր հավաստի համարվել, եթե չլիներ մեկ այլ իրադարձություն, որն օրվա ճշտությամբ համընկել է Ադրբեջանի Կուսարի շրջանում տեղի ունեցած մարտական բախումների բռնկման հետ: Հենց 14.09.2024 թ. է, որ այցով Բաքու էր ժամանել բրիտանական ՄԻ6 գաղտնի ծառայության ղեկավար Ռիչարդ Մուրը, ում նպատակը, *Report-ի* հաղորդմամբ, իբր թե դասախոսություն կարդալն էր ադրբեջանական ԱԴԱ համալսարանում[3]: Միջազգային փորձագիտական հանրության համար, ինչպես և սպասվում էր, համոզիչ չէր Ռ. Մուրի՝ ԱդրՀ այցի պաշտոնական վարկածը: Բրիտանական հետախուզության գերզբաղված ղեկավարի համար հանուն դասախոսության բազմաժամ թռիչքներն անթույլատրելի շռայլություն են: Եթե, իհարկե, խոսքը Ի. Ալիևի հետ հանդիպման մասին չէր: Ինչպես վկայում են ոչ պաշտոնական աղբյուրները՝ այդ չհրապարակված հանդիպումը, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:

Մի շարք հայ վերլուծաբանների կարծիքով՝ Ռ. Մուրի ժամանումը Բաքու պայմանավորված էր Ի. Ալիևին ՌԴ-ի և ԻԻՀ-ի հետ ԱդրՀ-ի հարաբերությունների վերաբերյալ որոշակի ուղերձ հանձնելու անհրաժեշտությամբ: Բաքու մեկնելուց մեկ

[2] «Ադրբեջանը սկսել է լեզգիների նկատմամբ պատժիչ գործողությունները Կուսարի շրջանում»: (ռուս.) Ռուս-արցախյան բարեկամության ընկերություն (14.09.2024), https://russia-armenia.info/node/100045\ (բեռնման օրը՝ 05.10.2024).

[3] «Բրիտանական ՄԻ6-ի ղեկավարն այցով գտնվում է Բաքվում» (ռուս.). Rerort.az (14.09.2024), https://report.az/ru/vneshnyaya-politika/rukovoditel-britanskoj-mi6-nahoditsya-s-vizitom-v-azerbajdzhane/ (բեռնման օրը՝ 04.10.2024)

շաբաթ առաջ Ռ. Մուրը Լոնդոնում հանդիպել էր ԿՀՎ-ի ղեկավար Ուիլյամ Բեռնսի հետ, ուստի նշանակում է, որ կարծես թե հենց այդ հանդիպման արդյունքում են ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան համաձայնեցրել Ռ. Մուրի և Ի. Ալիևի գաղտնի բանակցությունների օրակարգը[4]: Մի շարք իրանցի փորձագետների եզրահանգումների համաձայն՝ Մուրը հերթական անգամ պահանջ է ներկայացրել Ադրբեջանին՝ արևմտյան բլոկին ձեռնտու, պայմաններով արագացված խաղաղություն կնքել Հայաստանի՝ ներառյալ, այսպես կոչված «*Զանգեզուրի միջանցքի*» հետ: Վաշինգտոնի և Լոնդոնի համար ծայր աստիճան անհրաժեշտ է հասնել նրան, որպեսզի Սյունիքի տարածքով հաղորդակցությունների նկատմամբ վերահսկողությունն անցնի իրենց տնօրինմանը՝ այդպիսով իսկ բացառելով Ռուսաստանի ԱԴԾ զորքերի ներկայության հնարավորությունը նշված տարածաշրջանում: Բացի այդ, բրիտանական հետախուզության ղեկավարը, հավանաբար, նախազգուշացրել է Բաքվին հրաժարվել «Հյուսիս–Հարավ» համաշխարհային առևտրա-էներգետիկ նախագծին ինտեգրվելու մտադրությունից, որը պլանավորում են Մոսկվան և Թեհրանը՝ որպես հիմք դիտարկելով ստորագրման պատրաստվող «ռազմավարական գործընկերության» մասին համաձայնագիրը: Իրանցի վերլուծաբան Էհսան Մովահեդիանի կարծիքով՝ եթե Ալիևը հաշվի չառնի Արևմուտքի պահանջները, ապա Մեծ Բրիտանիան «*պատրաստ է վերջ տալ նրա վարչախմբին*»[5]:

Ինչպես իր հերթին ենթադրում է հայ փորձագետ Հայկ Նահապետյանը՝ Ռիչարդ Մուրը նպատակ ուներ Իլհամ Ալիևին դրդելու այնպիսի որոշումների, որոնք պետք է պայթեցնեն Հարավային Կովկասը և, այդպիսով իսկ, այն վերածեն ՌԴ-ի դեմ «*երկրորդ ճակատի*»: Ըստ փորձագետի՝ Վ. Պուտինի օգոստոսյան այցը Բաքու կապված էր հենց Ի. Ալիևի վրա ազդելու փորձի հետ և նպատակ ուներ կանխելու Արևմուտքի այդ ծրագիրը[6]: Նրա կարծիքով՝ ուկրաինական ճակատում անհաջողություններից և, մանավանդ, «*Կուրսկի ռազմագործողության*» ձախողումից հետո ամերիկա-բրիտանական տանդեմը ձեռնամուխ է եղել Հարավային Կովկասի ապակայունացմանն ուղղված ծրագրի նախապատրաստմանը, որը կոչված է լինելու շեղել ՌԴ ուշադրությունը և ուժերը հետ քաշել Ուկրաինայից: Ըստ փորձագետի՝ այդ համատեքստում Արևմուտքի աշխատանքի ուղղություններից մեկը լինելու է Վրաստանը, որտեղ Վաշինգտոնը և Լոնդոնը հուսով են ընտրություններից հետո ստանալ իրենց հանդեպ բարեհաճ նոր իշխանություն, որը պատրաստ կլինի դիմակայության մեջ մտնել ՌԴ-ի հետ: Այն դեպքում, եթե չհաջողվի խաղաղ ճանապարհով հասնել դրան, երկյակը նախատեսում է քվեարկության

[4] «Բրիտանական հետախուզության ղեկավարը Բաքվում է. Տարածաշրջանում շահերի հակամարտությունը մոտ է գագաթնակետին» (ռուս.): Verelq (16.09.2024), https://verelq.am/ru/node/149854\ (բեռնման օրը՝ 06.10.2024):

[5] «Ի՞նչ օրակարգով է Բաքու ժամանել ՄԻ6-ի ղեկավարը» (ռուս.). Hraparak (20.09.2024), https://hraparak.am/post/25823b60c127061dc5e973c91e3071c7\ (բեռնման օրը՝ 05.10.2024)

[6] Տես նույն տեղում:

արդյունքները նենգափոխված լինելու պատրվակով քաղաքացիական դիմակայություն նախաձեռնել այդ երկրում և նպաստել վրաց «արևմտականների» կողմից իշխանության զավթմանը: Ամերիկա-բրիտանական երկյակի հարավկովկասյան օրակարգի երկրորդ նշանակալի կետը Ադրբեջանն է, որի ղեկավարությունից Վաշինգտոնը և Լոնդոնը պահանջում են երաշխավորված քաղաքական և տնտեսական անջատում Ռուսաստանից և, հնարավոր է, նրա հետ ուղղակի հակամարտության մեջ մտնել Դերբենդի շուրջ պատմական-տարածքային վեճերի կամ այլ կուտակված հակասությունների, այդ թվում՝ հայ-ադրբեջանական հակամարտության հիման վրա: Դա, իր հերթին, գործընթացում երաշխավորված կերպով կներգրավի Թուրքիային, որը ձեռնամուխ կլինի ՌԴ-ին Կովկասից դուրս մղելու վերջին փուլի գործողություններին:

Դատելով ստացվող տվյալներից, Ի. Ալիևը հայտնվել է ծանր կացության մեջ: Մի կողմից՝ նա արդեն մտել է ՌԴ-ի հետ համակողմանի մերձեցման և «Արևելյան բլոկի» երկրների փոխգործակցության գլոբալ ծրագրերին ինտեգրման մեջ: Դրա վառ օրինակ է ծառայում ԲՐԻԿՍ-ին միանալու մասին Բաքվի հայտը, որ ներկայացվել է Բաքվից Պուտինի մեկնելուց անմիջապես հետո[7]: Անձամբ Ի. Ալիևի համար դժվար կլինի երես թեքել այդ գործընթացներից՝ հաշվի առնելով ադրբեջանական տնտեսության գոյութենական կապվածությունը ՌԴ-ի հետ, ինչպես նաև երկրի, այս համատեքստում, աննպաստ աշխարհագրական դիրքը, որը սեղմված է «ռուսական Սցիլլայի» և «իրանական Խարիբդայի» արանքում: Մյուս կողմից՝ ԱդրՀ նախագահը հայտնվել է Արևմուտքի խիստ ճնշման տակ, որի ազդեցության գործիքակազմը Բաքվի վարչախմբի վրա նույնպես լայնածավալ է: Խոսքը նաև Ղարաբաղյան հարցի ճակատագրի մասին է, որը դեռևս քաղաքաիրավական ձևակերպում չի ստացել միջազգային ատյաններում, և պատժամիջոցների սպառնալիքի մասին՝ ինչպես ամբողջ Ադրբեջանի, այնպես էլ՝ անձամբ այնտեղ իշխող ընտանիքի դեմ:

Ալիևի համար միանգամայն դժվար է գլուխ հանել աշխարհաքաղաքական կողմնորոշման երկընտրանքից, որը վաղ թե ուշ պետք է իր վարչախմբին կանգնեցնի գոյութենական ընտրության առջև: Խուսավարելու ռեսուրսը, որը նրան թույլ է տալիս երկար ժամանակ «պարտքեր կուտակել» ուժի գլոբալ հակադիր կենտրոններից, արդեն սպառել է իրեն: Բոլոր կողմերից «պարտատերերը» Բաքվից պահանջում են վերադարձնել ամեն ինչ և անմիջապես:

Քիչ հավանական է, որ ԱդրՀ-ում իշխող վարչախումբն արդեն կատարել է իր ընտրությունը և չի փորձի շարունակել մրցակից աշխարհաքաղաքական կենտրոնների միջև խուսավարելու քաղաքականությունը: Սակայն արդեն իսկ ակնհայտ է, որ Բաքվի համար կտրուկ նեղացել է խուսավարելու տարածքը՝ Ի. Ալիևին թույլ չտալով խուսափել

[7] «Ադրբեջանը ԲՐԻԿՍ-ի մեջ ընդունվելու հայտ է ներկայացրել» (ռուս.): ТАСС (20.08.2024), https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/21646425\ (բեռնման օրը՝ 06.10.2024):

«պարտատերերի» հետ ունեցած խնդիրներից կամ դրանք հետաձգել ավելի ուշ: Ըստ ամենայնի, Ռ. Մուրը Բաքու էր ժամանել վերջնագրային պահանջներով, ինչը վկայում է Ադրբեջանի և Արևմուտքի հարաբերություններում առաջացող ճգնաժամի և դրա հնարավոր ծայրահեղ բացասական հետևանքների մասին անձամբ Ի. Ալիևի համար:

Նախ, պետք է ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ Ալիևի հետ Մուրի հանդիպումից ընդամենը մի քանի օր անց *British Petroleum* բրիտանական անդրազգային էներգետիկ կորպորացիան հայտարարեց միջազգային TAP կոնսորցիումում իր՝ 20% բաժնեմասից ազատվելու որոշման մասին: Ոլորտի միջազգային փորձագետների կարծիքով՝ BP-ն վաղուց էր մտադիր վաճառքի հանել կոնսորցիումի իր մասնաբաժինը, սակայն վերջնական որոշումը չգիտես ինչու կայացրել է հենց հիմա: Վերլուծաբանները հակված են կարծելու, որ այդ որոշման վրա ազդել է այն, որ գրավիչ չեն ադրբեջանական էներգետիկ նախագծերը, և որ սպառվում են այդ երկրի ածխաջրածինների պաշարները: Սակայն, միևնույն ժամանակ, նրանք չեն բացառում որոշակի քաղաքական դրդապատճառներ, որոնք Միացյալ Թագավորությանը ստիպել են սառել Ադրբեջանի նկատմամբ[8]: Այն տպավորությունն է ստեղծվում, թե BP-ն երկար ժամանակ փորձում էր հրաժարվել TAP կոնսորցիումի իր ակտիվներից, սակայն դրա համար չէր ստացել Մեծ Բրիտանիայի կառավարության թույլտվությունը: Իսկ այժմ պատժամիջոցը հանվել է, ինչը կարող է ուղղակիորեն կապված լինել Լոնդոնի և Բաքվի միջև հարաբերությունների քաղաքական ուղու որոշ հակասությունների հետ:

Սակայն, բրիտանա-ադրբեջանական բացահայտված թերըմբռնումների հիմնական նշաձող պետք է համարել հենց Կուսարի իրադարձությունները, որոնց սկիզբը համընկավ Ռ. Մուրի՝ նույն օրը Բաքու կատարած այցի հետ:

Բանն այն է, որ մերձավորարևելյան և ռուսաստանյան մի շարք աղբյուրների տվյալներով՝ բրիտանական հետախուզությունն անմիջական առնչություն ունի «Լեզգիստանի» ապստամբական շարժումների հետ, որոնք գործում են ինչպես ՌԴ Դաղստանի Հանրապետության տարածքում, նույնպես և ԱդրՀ-ում: Ռուսաստանում և Ադրբեջանում լեզգիական ազատագրական շարժման առաջացման պատմությունը սկիզբ է առնում անցյալ դարի 80-ականների վերջերին, երբ տակավին ԽՍՀՄ օրոք Դաղստանում ընդհատակում տարանջատ գործող ուսանողական ազգայնական բջիջների հիման վրա կազմակերպվեց «Սադվալ» կառույցը: Սկզբում դրա առաջնորդները, օգտվելով ԽՍՀՄ փլուզման ժամանակ Կովկասում առաջացած վակուումից, ձգտում էին ստեղծել «Լեզգիստան» անկախ պետությունը, որը պետք է

[8] «British Petroleum-ը վաճառում է իր ակտիվները: Բրիտանացիները չեն ցանկանում մասնակցել նախագծերի, որոնք պետք է եկամուտ բերեն Ռուսաստանին, և փաստ չէ, որ այդ ներդրումները կարդարացնեն իրենց» (ռուս.): Regionstv. am (27.09.2024), https://regionstv.am/ru/7755.html\ (բեռնման օրը՝ 05.10.2024).

ներառեր ռուսաստանյան Դաղստանի հարավային ծայրամասերը և նախկին ԱդրԽՍՀ-ի հյուսիսային շրջանները: Սակայն ՌԴ-ում և ԱդրՀ-ում կենտրոնական իշխանության դիրքերն ամրապնդվելուց հետո շարժումը փոխեց իր ռազմավարությունը և սկսեց աշխատանք տանել, նպատակ ունենալով հասնել ռուս-ադրբեջանական սահմանների վերանայմանը՝ ի նպաստ ՌԴ կազմում լայն ինքնավարության իրավունքով լեզգիական ժողովրդի վաղնջական հողերի վերամիավորման: «Սադվալն» առանձնապես ակտիվ պայքար էր մղում Դերբենդի ադրբեջանականացման և Ադրբեջանի գերազանցապես լեզգիներով բնակեցված հյուսիսային շրջաններում Բաքվի վարած ուծացման քաղաքականության դեմ: «Սադվալը» քաղաքական պայքար էր մղում՝ ցուցադրաբար Ռուսաստանի և Ադրբեջանի իշխանություններին հասկացնել տալով, որ չի ընդունի ուժի կիրառումը «*պատմական արդարության*» հաստատման հարցում: Սակայն դա չխանգարեց, որպեսզի չվերացնեն կազմակերպության առաջնորդներին: 2015 և 2016 թթ. տարօրինակ հանգամանքներում զոհվեցին շարժման երկու առաջնորդները Ռուսլան Մահոմեդռահիմովը և Նազիմ Հաջիևը: Նրանցից առաջինին խեղդել են անհայտ անձինք, իսկ երկրորդը դանակահարվել է Մախաչկալայի իր բնակարանում[9]:

Եվ, այնուամենայնիվ, քաղաքական քայլերին զուգահեռ, «Լեզգիստանի» ազատագրման շարժման որոշ հատվածներ դիմեցին պայքարի զինված ապստամբության ձևին: Պայքարող լեզգիների հատկապես ակտիվորեն ռազմականացված թևը հանդես էր գալիս ադրբեջանական իշխանությունների դեմ, որոնք ամենայն կերպ ճնշում էին մայրենի լեզվով կրթություն ստանալու և խոսելու, ազատորեն սունի ուղղության իսլամ դավանելու և անձնագրում իր հիմնական ինքնությունն արձանագրելու այդ կովկասյան ժողովրդի իրավունքը: Ռուսաստանն այդ հարցերում ավելի հանդուրժողական էր պահում իրեն, ուստի Լեզգիստանի «*Անտառային եղբայրների*» զինված պայքարը հիմնականում ուղղված էր ադրբեջանական համակարգի դեմ: Լեզգիների շրջանում գերակշռում էր այն կարծիքը, որ ապարդյուն է երկու ճակատով առճակատումը և, հետևաբար, իրենց իրավունքների համար պայքարում պետք է հենվել կողմերից մեկի՝ ՌԴ-ի վրա, որն ավելի բարեհաճ էր ազգային ինքնության հարցի նկատմամբ և այդ ժամանակ ոչ այնքան լավ հարաբերություններ ուներ ԱդրՀ-ի հետ:

Սակայն, Մոսկվայի և Բաքվի միջև թերըմբռնումները լրիվ վերացան, երբ նրանք համաձայնության եկան էներգետիկ ոլորտում մի շարք հարցերի շուրջ, ինչպես նաև որոշեցին հանել սահմաններին առնչվող բոլոր վիճելի հարցերը: Ռուսաստանը 2011թ. սահմանագծեց Ադրբեջանի հետ իր սահմանը, ինչի արդյունքում հարավային հարևանին փոխանցեց լեզգիական երկու գյուղ և 2000 հա ալպիական արոտավայրեր: Բացի այդ,

[9] «Ո՞ւմ էր ձեռնտու «Սադվալի» առաջնորդների մահը (ռուս.) / Кавказский узел (09.02.2021), https://www.kavkaz-uzel.eu/articles/359170\ (բեռնման օրը՝ 04.10.2024):

Ադրբեջանն իրավունք ստացավ Սամուր լեռնային գետից դեպի իրեն մղել նրա ջրի կեսը[10]: Դա մեծ առիթ դարձավ Ռուսաստանի լեզգիների՝ դեպի արտաքին աջակցության հնարավոր կենտրոններ ուղղված հիասթափության և ազատագրական շարժման վերակողմնորոշման համար: Հենց այդ ժամանակ էր, երբ լեզգիների շարժումը, բացի ազգային գաղափարից, սկսեց հենարան փնտրել արմատական կրոնական հոսանքներում: Արդյունքում շարժումը վերածվեց ծայրահեղ ազգայնականության և կրոնական ծայրահեղականության տարրերի հիբրիդային խառնուրդի: «Սադվալի» առաջնորդների վերացումից հետո, որը շատ դիտորդների կարծիքով իրականացվել է Մոսկվայի և Բաքվի փոխհամաձայնությամբ ու գործողություններով, չկային հեղինակավոր գործիչներ, ովքեր կարող էին կանխել վերափոխման այդ գործընթացն ու թույլ չտային ծայրահեղական բնույթի գաղափարների արմատավորումը շարժման մեջ: Միևնույն ժամանակ, գտնվեցին ուժային կենտրոններ, որոնց ջանքերով «Ազատ Լեզգիստանի» գաղափարի իսլամացումը համակարգային ու զանգվածային բնույթ ստացավ: «Չեչենական նախագծի» ձախողումից հետո Թուրքիան, ԱՄՆ-ը և հիմնականում Մեծ Բրիտանիան սկսեցին լեզգիներին համարել որպես ՌԴ դեմ հաջորդ խոյահար: Գոյություն ունեն բազմաթիվ ապացույցներ ու մասնակի տվյալներ, որ Լոնդոնը տևական ժամանակ ֆինանսապես աջակցել է Ադրբեջանում և Դաղստանում գործող «Անտառային եղբայրներին», մարտական գործողությունների վարման հրահանգներ տվել նրանց և գաղափարախոսական մշակում իրականացրել արմատական մահմեդականության գաղափարների շրջանակում: Այդ գործունեության նպատակն էր ստեղծել ապակայունացման նոր վիթխարի շիկացած օջախ, որը կարող է անհրաժեշտ պահին պայթեցնել Դաղստանն ու ամբողջ Կովկասը: Թուրքիան, իր հերթին՝ նախագծի շահառու էր, քանզի դրա մեջ դիտարկում էր տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերին վճռական հարված հասցնելու և, այսպես կոչված, «*թուրանական տարածություն*» մուտք գործելու հնարավորությունը: Ռիչարդ Մուրի վերջին հայտարարությունը թյուրքական ինտեգրման ծրագրերի հեռանկարայնության մասին ևս մեկ անգամ վկայում է, որ Մեծ Բրիտանիան է «լեզգիական խաղաքարտի» խաղարկումը ներառող այդ նախագծի գլխավոր ճարտարապետը: Եվ հենց ՄԻ6-ի ղեկավարին՝ մասնագիտությամբ թյուրքագետ ու դիվանագետ Ռիչարդ Մուրին պետք է համարել ծրագրի գլխավոր համակարգողը, ում 2020 թ. հետախուզության պետի պաշտոնում նշանակումը նշանավորեց դրա ակտիվ փուլի մեկնարկը[11]:

---

[10] «Ռուսաստանն Ադրբեջանին «նվիրել է» երկու գյուղ և 600 քաղաքացու» (ռուս.) / ФЛНКА (01.08.2011), https://flnka.ru/digest-analytics/201-rossiya-podarila-azerbaydzhanu-dva-sela-i-600-grazhdan. html\ (բեռնման օրը՝ 05.10.2024).

[11] Հասանով Քյամրան Նիզամի օղլի, «Բրիտանիայի ազդեցությունն Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում Թուրքիայի քաղաքականության վրա», (ռուս.). КиберЛенинка, https://cyberleninka.ru/article/n/vliyanie-velikobritanii-na-politiku-turtsii-v-zakavkazie-i-na-blizhnem-vostoke\ (բեռնման օրը՝ 04.10.2024).

Հաշվի առնելով վերն ասվածը՝ կարելի է պատկերացնել, որ Կուսարում տեղի ունեցած մարտերը և շրջանի պաշարված վիճակն ի սկզբանե չէին կարող մտնել բրիտանական ծրագրերի մեջ: Բայց դա տեղի ունեցավ, ընդ որում՝ ոչ թե ՌԴ-ի, այլ ԱդրՀ-ի դեմ, ինչը կարող է Ի. Ալիևի համար ազդանշան ծառայել Լոնդոնի դժգոհության մասին: Իսկ այն կարող է կապված լինել Կովկասում իրավիճակի սրումից Բաքվի հրաժարվելու հետ՝ «հետընտրական» Թբիլիսիի և Ի. Ալիևի՝ Վ. Պուտինից ու նրա ծրագրերից հեռու մնալու դժկամության հետ:

Կուսարում տեղի ունեցածը մեկնաբանած իրանական Տելեգրամ-ալիքների համաձայն՝ Ի. Ալիևը տեղեկացված էր Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և Թուրքիայի՝ ԱդրՀ-ի հյուսիսային շրջաններում իսլամիստական լեզգիական ստորաբաժանումներ ստեղծելու ծրագրերին: Երկրի ղեկավարը ոչ միայն չէր կարող տեղյակ չլինել այդ մասին, այլև հազիվ թե բուն գործընթացը կարող էր տեղի ունենալ առանց ադրբեջանական հատուկ ծառայությունների անմիջական մասնակցության: Չէ՞ որ, ինչպես պնդում են իրանցիները, խոսքը 7000 գրոհայիններից բաղկացած մի ամբողջ բանակի մասին է, որն առանց Բաքվի մասնակցության, ըստ էության, հնարավոր չէ պահել ու մարտի պատրաստել: Հետևապես, իրանցիների տրամաբանությամբ, Ի. Ալիևն ինքը բրիտանա-թուրքական նախագծի շահառու է հանդիսանում, հանուն ինչի նա նույնիսկ աչք է փակել լեզգիական հարցի ազգայնական բաղադրիչի վրա՝ վստահ լինելով, որ նախագծի հակառուսական ուղղվածությունը հետագայում ԱդրՀ-ի ներկայիս ներքաղաքական ծախսերն ու նրա ազգային անվտանգությանը սպառնացող վտանգը կփոխհատուցի լայնածավալ աշխարհաքաղաքական ձեռքբերումներով: Սակայն, ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, տվյալ պահին Բաքուն էր, որ ստիպված եղավ զգալ «լեզգիական թրի» սրությունը՝ բախվելով արևմտյան բարեկամների ու դաշնակիցների հետ հարաբերություններում առկա հիմնախնդիրներին:

Եվ, այնուամենայնիվ, բացի Կուսարի իրադարձությունների իրանական վարկածից, կան նաև այլ կարծիքներ: Մասնավորապես, չի բացառվում, որ ապակայունացումը Կուսարում կազմակերպել է անձամբ Ի. Ալիևը, ընդ որում՝ հենց այն պահին, երբ հյուրընկալում էր բրիտանական հետախուզության ղեկավարին: Նրա այդ քայլը կարող է նշանակել, որ Բաքուն այլևս չի ցանկանում համագործակցել Արևմուտքի՝ ռուսաստանյան Կովկաս ապակայունացնող տարրեր արտահանելու ծրագրերի հետ: Եվ, որ Ադրբեջանը պատրաստ է վերջ տալ լեզգիական ազգայնական-իսլամիստական նախագծին, որի ստեղծմանն անմիջական մասնակցություն է ունեցել: Այդ դեպքում ձախողում կունենան Ռուսաստանի կովկասյան սահմանի ամբողջ երկայնքով ապակայունացման գոտու ստեղծման ամերիկա-բրիտանական ծրագրերը[12]: Պարզվեց, որ ՈւԶՈՒ-ի ներխուժումը ՌԴ

[12] Ռուսաստանի Դաշնության հետ Վրաստանի (առանց Աբխազիայի և Օսիայի) փաստացի սահմանի երկարությունը 575 կմ է, Ռուսաստանի Դաշնության հետ Ադրբեջանի սահմանի երկարությունը՝ 327,6 կմ:

Կուրսկի մարզ բավարար չէր մարտական գործողությունների ռազմաճակատն արմատապես վերակազմավորելու և Դոնբասի ու Խարկովի ուղղություններում ռուսական ուժերի խտությունը նվազեցնելու համար: Եվ, ըստ Արևմուտքի «Բ» պայմանական ծրագրի, միայն «*Կովկասյան ճակատի*» ստեղծումն է, որ կարող է հանգեցնել Ուկրաինայում ՌԴ ԶՈՒ-ի ճնշման թուլացմանը՝ Ռուսաստանում զորահավաքի նոր ալիք առաջ բերելով և խուճապ ու դժգոհություն տարածելով այդ երկրում: Բոլոր այս և այլ անուղղակի հետևանքները, ըստ Լոնդոնի և Վաշինգտոնի հաշվարկների, կարող են աղետի եզրին հասցնել «*Պուտինի վարչախմբին*» և ամբողջ Ռուսաստանը: Սակայն Ի. Ալիևը, եթե հիմք ընդունենք այս վարկածը, փորձում է, ոչ առանց Վրաստանում տիրող իրավիճակի դիտարկման, տապալել այդ ծրագրերը: Եթե հոկտեմբերյան ընտրությունների արդյունքում իշխանությունը Թբիլիսիում մնա Բ. Իվանիշվիլու գլխավորած քաղաքական ուժերի ձեռքում, ինչը միանգամայն հավանական է, ապա ՌԴ դեմ Լոնդոնի գործադրած «*լեզգիական խաղաքարտը*» կարող է աղետի վերածվել հենց իսկ Ադրբեջանի համար: Նման սցենարի դեպքում դրա ամբողջ հյուսիսային մասը կհայտնվի «*ռուսաստանյան երկրորդ ՀՌԳ*»-ի գոտում:

Այսպես, թե այնպես, գործնականում կասկած չկա, որ Ադրբեջանի և ամերիկա-բրիտանական երկյակի միջև նշմարվել են համակարգային ճգնաժամի նշաններ: Դրա պատճառներն այն են, որ Ի. Ալիևը, պատկերավոր ասած, համաձայն չէ այն գնի հետ, որ Արևմուտքը ներկայացրել է Արցախի զիջման և 2023 թ. սեպտեմբերին իրականացրած էթնիկ զտումների թեմայի շուրջ միջազգային ասպարեզում լռության դիմաց: Այն, որ առկա հակասությունները հատել են «*բարեկամական ու գործընկերային*» հարաբերություններում ընդունելի սահմանագիծը, վկայում է նաև Ադրբեջանի նախագահի՝ Վաշինգտոնին ուղղված հայտարարությունների տոնը, որ նա արել է 04.10.2024 թ. Ջեբրայիլի բնակչության հետ հանդիպման ժամանակ: Իր ելույթում Ի. Ալիևը, իր քաղաքական կարիերայի ընթացքում աննախադեպ ոճով կոշտ քննադատության էր ենթարկել ԱՄՆ-ին և նրան մեղադրել «*ապերախտության* մեջ»[13]: Այդ հարձակումներն անսպասելի էին անգամ բուն ադրբեջանական իստեբլիշմենտի և ԶԼՄ-ների համար՝ վատ սքողված տագնապի տեղիք տալով: Սակայն վտարանդիության մեջ գտնվող ադրբեջանցի ընդդիմադիրների համար, ովքեր լավատեղյակ են և ընկալում են Արևմուտքի տրամադրվածությունը Բաքվի

Սա միասին մոտ 900 կմ է: Համեմատության համար նշենք, որ ռուս-ուկրաինական ճակատի երկարությունը (ըստ ուկրաինական տվյալների) 2023 թ. գարնան դրությամբ կազմել է մոտ 3750 կմ: (Աղբյուր՝ Վլադիսլավ Կրավցով, «Ցույց է տալիս լարվածության մակարդակը. Պաշտպանության ուժերը հայտարարեցին առաջնագծի ներկայիս երկարության մասին», 2023 թվականի մայիսի 19, Ռազմական մեդիա կենտրոն, https://24tv.ua/ru/sily-oborony-nazvali-aktualnuju-protjazhennost-fronta-24-kanal_n2317087 (բեռնման օրը՝ 07.10.2024):

[13] «Ալիևը դժգոհել է Ադրբեջանի հանդեպ ԱՄՆ-ի երախտամոռությունից» (ռուս.): РБК (04.10.2024), https://www.rbc.ru/politics/ 04/10/2024/66ffce209a79473e9cdc7d92\ (բեռնման օրը՝ 07.10.2024):

իշխող վարչախմբի հանդեպ, միանգամայն հասկանալի է Ի. Ալիևի՝ վերջին շաբաթների իմպուլսիվությունը: Ադրբեջանից արտագաղթած քաղաքական այլախոհները նկատելիորեն աշխուժացել են և ակտիվորեն պնդում են, որ ազատական աշխարհը պատժամիջոցներ է պատրաստում Ադրբեջանի և անձամբ Ալիևների ընտանիքի դեմ:

Վերոնշյալ ամեն ինչ մեկ անգամ ևս ցույց են տալիս, որ գործնականում ավարտվել է Հարավային Կովկասում համաշխարհային խոշոր խաղացողների շահերի միջև Բաքվի անվերջ խուսավարելու ժամանակը: Ներկայումս «խաղն» անցնում է վա-բանկի, և գլոբալ մրցակիցները վերջնագրի տեսքով «խաղադրույք» են պահանջում ալիևյան Ադրբեջանից: